Գրանթ Թորնթոն Ամիո ՍՊԸ
ՀՀ, ք. Երեւան 0012
Վաղարշյան 8/1
Հ. + 374 10 260 964
Ֆ.+ 374 10 260 961

Grant Thornton Amyot LLC
8/1 Vagharshyan Str.
0012 Yerevan, Armenia
T + 374 10 260 964
F + 374 10 260 961
www.gta.am

Անկախ աուդիտորի եզրակացություն

«Առաջին հիփոթեքային ընկերություն» ՈՒՎԿ ՍՊԸ-ի մասնակիցներին,

Մենք ստուգել ենք «Առաջին հիփոթեքային ընկերություն» ՈՒՎԿ ՍՊԸ-ի (այսուհետ՝ «Կազմակերպություն») կից ներկայացվող համառոտ ֆինանսական հաշվետվությունների (որոնք ներառում են 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվապահական հաշվեկշիռը, նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին համառոտ հաշվետվությունները) համապատասխանությունը Կազմակերպության՝ 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա ամբողջական ֆինանսական հաշվետվությունների հետ՝ համաձայն Հայաստանի Հանրապետության աուդիտի ստանդարտների:

Կազմակերպության ղեկավարությունը պատասխանատու է սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստելու և արժանահավատորեն ներկայացնելու համար: Մեր պատասխանատվությունն է ստուգել սույն համառոտ ֆինանսական հաշվետվությունների համապատասխանությունը վերոհիշյալ ամբողջական ֆինանսական հաշվետվությունների հետ:

Ի հավելումն, մենք աուդիտի ենք ենթարկել Կազմակերպության 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա ամբողջական ֆինանսական հաշվետվությունները՝ պատրաստված համաձայն Հայաստանի Հանրապետությունում վարկային կազմակերպությունների գործունեությունը կանոնակարգող օրենսդրության, և 2010թ. հունիսի 04 ամսաթվով թվագրված մեր եզրակացությունում մենք ներկայացրել ենք դրական եզրակացություն ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Մեր կարծիքով, կից ներկայացվող համառոտ ֆինանսական հաշվետվությունները ճշգրտորեն են ստացվել Կազմակերպության ամբողջական ֆինանսական հաշվետվություններից:

2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպության ֆինանսական վիճակի, գործունեության արդյունքների, ինչպես նաև աուդիտի շրջանակների վերաբերյալ ավելի լավ պատկերացում կազմելու համար համառոտ ֆինանսական

հաշվետվությունները պետք է դիտարկել դրանց ստացման համար հիմք հանդիսացող ֆինանսական հաշվետվությունների, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեր աուդիտորական եզրակացության հետ համատեղ:

Գագիկ Գյուլբուդաղյան
Տնօրեն/բաժնետեր

Արեն Աղաջանյան
Աուդիտոր

04 հունիսի, 2010թ.

ք. Երևան